

12. 9 Մայիս 1779 «ի յանբօնայ», նոյն առ նոյն «... Ես ի յօտարութեան եւ պանդխտութեան իմում, զձեզ եւ զազգն իմ (որք կան ի նահանգոջս յայսմիկ) ունիմ ինձ մխիթարութիւն մենացեալ անձին իմոյ ... գրեալ էիք աղատումն կալանաւորաց խղճացելոցն, եւ զայն օժանդակութեամբ դէսպանին Գալլիացւոց, ուրախ եղէ մեծապէս, եւ ամենայն սրտէ օրհնեցի զլուսագոփս սրբոյ եկեղեցւոյն եւ զթագաւորութիւնս իւրեանց... ընդ Սսայ կաթողիկոսին, որ զվէճի դուռն բացեալ է ընդ նմա շատ մեծ ջուր տանելոց է սոյն վէճ. տեսցուք զկատարածն. ափսոս եւ աւաղ ազգին մերոյ, զի ի մէջ աշխարհի առակ նշաւակի եղել: Տէր այցարասցէ եւ լոյս սրտից իւրեանց տացէ եւ ծագեսցէ առ ի գիտել եւ ճանաչել զճմարտութիւն. եթէ պատշաճ վարկանիցիս այն բարեկամին ի մէջ ողջոյն առաքիցես. տէր արձակեսցէ զինքն ի կապանաց իւրոց... Գրիգոր վրդպի երբեմն եւ այլն:»

13. 19 Հոկտ. 1779 «ի յանբօնայ» նոյն առ նոյն «... զսիրալի գիրդ... ընկալայ... յորում զեկուցեալ էիր զընկալնուլ զգիր ի Գերապայժառ Յարութիւն Արքեպիսկոպոսէ, եւ թէ որպէս պատուիլն եւ յառաջագէմ լինիլն ի յաչս օգոստափառ կայսերուհւոյն... ի մեծի Պօլսոյ հասարակաց հրատարակեալ զլուր ինչ եթէ լսիցէք գրելն եւ ծանուցանելն ձեր առ մեզ աղաչեմ թարց զանցառութեան... Գրիգոր վրդպի երբեմն Պապրիարք մեծի Պօլսոյ:»